


հայ երկրի շատ կոյմերը արագիւն կը գրտա-
նուի, բայց բուն իւր սիրած երկիրն է վլան։
Վայրենիի և ընտանի Սագերն, վայրենի
և ընտանի Բագերն, Կոցտան և Կոցա-
րակ և վերջապէս Հաւալուն և Հրաթուշուն
առատութեամբ և խմբովին կը զարգարեն
հայրենեաց շատ մի կողմերու լճերն և մո-
րերն, ինչպէս փարպեցին Ղազար իսկ կը
յիշէ՝ զանոնք իւր Արարատայ գաւառի նկա-
րագրութեան մէջ։

Անցնինք վերջապէս գրկելու և համբու-
րելու այն հաւն՝ որուն քնաշխարհիկ լինելն
փառք է հայրենեաց, Բանաստեղծը չի նուա-
զած զայն՝ չի համբուրեր իւր զփոնէ պսակն,
թռչնաբանը իւր ամէն հրապուրիչ ածական-
ները ասոր կը սեփականէ՝ և զեռ չի բաւա-
կանանար արժանապէս նորա գեղեցկութիւնը
ցոյց տալու։ Սա է այն հաւը՝ որ իւր ներ-
կայութեամբ կը պնէ լճակներն, աւազան-
ները և բուրաստանները՝ ուր կը յաճախէ։
Կարապէն է Աստղեան կառածիդ հաւն, որուն
վրայ մեծ կենդանաբանն ապշելով կը գրէ.
«զարմանալի է, սիրելի ե ծափահարութեանց
արժանի»։ Այսպիսի բնոյճանուր բանաստեղ-
ծից ուշադրու թող վկայ լինի Սիւնեցին
Առաքէլ. «Կարապէն մեծ հաւ է որպէս զօշ-
խար մի, և բովանդակ սպիտակ, որպէս
զձիւն. և լինի ի ծով Գեղարքունի»։

Ինչ կը պատմեն ասոր վրայ հին մասե-
նագիրք Ուլիպիոս և Կիկերոն, Լուկրետիոս
և Էրիպիդէոս. կ'ըսեն, Կարապի ձայնը շատ
ներդաշնակ է և ակործելի, հոգեվարքի ծա-
մանակ կ'երգէ, իւր տխուր և փափուկ կենաց
վերջին ողջներ տալով։ Իւր վերջին ողջներն
առնելով, մենք ալ մեր վերջին ողջներ
կու տամք իրեն և իւր տոհմին քով գոտա-
նաց։

Հ. ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆ



ՎԵՆԵՏԿՈՅ ԿԱԶՄԱԻՆ ՄԻ ԱՆԴԱՄՆ

ՎԵՆԵՏԻԱ թէ և կորուսած է իւր համակրե-
ւէ գուքսերն, և անցեալ վարչական փառքն,
այլ կը պահէ ուսումնականաց ժողով մը, որ
իրեն մեծ պատիւ է, և արդի գիտնական դարուս
մէջ՝ իրեն անհրաժեշտ կարևոր Այժմ չեմ ուզեր
շօշափել այս ուսումնական կանոնին պատ-
մութիւնը, այլ լոկ իւր արդիւնաշատ անձնա-
ւորութենէն մին, Պրոֆ. Գեզաւոր մեզ կը յիշեց-
նէ իւր լեզուագիտութեամբ Վեճեթանէթէ։ Այս
մեծ ուսուցչական, որ լոկի միջիկ կը մշակէ
հնապարհագր. Պատահիւնի երիտասարդ մտքերը,
ինքնին շարժառիթ եղաւ սոյն փոքրիկ յօդուս-
ծին։

Սա, ինչպէս ծանօթ է մեր ընթերցողաց, քաջ
հայագետ և և զուտ հայասեր իրեն այցելողը
կը գտնէ զինքը գրքերու մէջ թաղուած. իւր
աշխատութեան սենեակներն բաց ի առաստա-
ղէն՝ միւս ամէն մի անկիւն, խորէ և որմ՝ զբը-
քերով ծածկուած են. այցելողին ստուերներն
չեն կարող աղատութեամբ շարժիլ, գրքերու
կը զարնուին, բայց չի կարծուի խառնիխառն
նետուած, այլ ամէն այլ կոկիկ շարուած, և
բոտ նիւթաց և լեզուաց զատ զատ դարաներու
մէջ գետնուած։ Չ'երկարի մեր յօդուածը թուե-
լով իւր գիտցած լեզուներուն անունները. ան-
ցուր մտքէդ ընթերցող, ամբողջ քեզ ծանօթ
լեզուներն և անծանօթներէն այլ մի քանին
հարցուն համազունի մը. նա ալ ամէն լեզու-
ներն կը հասկընայ, կը թարգմանէ, և զանոնք
դատելով՝ կ'ընթեռնու։ Մեր նախնեաց լեզուին
արդէն քաջ ծանօթ է, այժմ աշխարհիկ լեզուն
կը մշակէ, և մեծ սէր և ջանք կը յայտնէ
հմտանալու նա և մեր դաւառային բարբառոց,
մեր լեզուի այս երրորդ մասին սիրահարութե-
նէն մղումով՝ կը խնդրէ մեզմէ Հայրառայակ՝
վերնագրով դրած յօդուածին մէջ յիշատակած
և առ վ. հ. Արիւն ուղղեալ դաւառիկ նամա-
կին՝ արդի սովորական աշխարհաբար լեզուի
թարգմանութիւնը. զոր ահաւասիկ կը հրատա-
րակեմք։ և այս էր մեր յօդուածին էական
նպատակն։

«Սիրուն վարդապետ

Մենք գիտուն մէկը չենք, և թէ և բան մը
չենք գիտեր, բայց բանիւն մարդիկները շատ
կը սիրենք և կը մեծարենք։

Մեր վարդապետը ու վարժապետը իրարու
հետ բան մը կը խօսէին, խորհուրդ կը կազ-

* Բազմակէպ, յունիսի պրակ, 288։

մէին, և ահա կը տեսնես որ անդէին ճանի մը հարուստ մարդիկ այլ եկան անոնց խառնուեցան. այսպէս այնպէս՝ վերջապէս մեծ ժողովք մը եղաւ, զիտցածնաւ չափ ալ մի ջանի երդ այլ երգեցինք. այսօրից վերջը՝ մեր մէջէն մէկը ըսաւ որ՝ այն անցած օրուան կարդացուած զրգին մէջ ի՛նչ օգտակար բաներ գրուած էին. երբ որ մարդ զայն կարդայ՝ սիրտը լցուած կը դարձանայ: Այն ատեն վարժապետը մեզի ըսաւ, թէ այն քի յոյսն է Յոնացիներ բռնած զրգերը որ ձեզի կարդալու համար տօւի, ահա աւսիկ այս տարի անոնց հեղինակին զրականութեան 30 տարին կ'աւարտի. այսպիսի առթիւ քաղաքացիք անոր նուէր մը՝ բան մը կը շարժեն, դուք ալ արդ բան մը շարժել չէ՞ք ուզեր: « Ինչու չէ », ըսինք մէկ բերան, և թիթեռնիկի պէս վեր թռանք. մէկերին անդին, մէկերին առդին, մէկերին առփարակ սաղարթներէ մէկերին ալ դէպ ի լեռ ճամբայ եղանք, ծաղիկներ ժողովելու համար, Փշուռն և Մաղուլուան այցելեցինք՝ առդիս անդի ինկանք. մեր մէջէն մէկը Փիլոսոֆն ու Գելլիմի բերան, միւսը Արիստոփանէս և Մըծրովուրդ, ուրիշ մէկն ալ Քօնի — խոտն և կաթնբուրդին, և ուրիշ շատ ու շատ ծաղիկներ ժողովելէն վերջը, ափ մը լաղուտ և իմառ փետեցինք և պայուսակի մէջ լեցուցօքք. այժմ լանոնք ազանձին առանձին կարգադրելով բեզ կը շարժենք:

Քու յինած զրգերէջ մինչև ցարդ շատ օգտուեցանք և պիտի օգտուինք. եթէ կարեւորինք՝ Ձեզ աւելի օգտակար նուէր մը կը շարժենք, բայց ի՛նչ բանք որ սրտերնուս մէջ կայ, բայց հեռունիս չի կայ: Ասոր համար՝ այս մեր լեռներուն ծաղիկներն՝ մեր առօթքներուն և օրհնութեանց հետ ընդունեն. այս պէտք ես գիտնալ որ Քու անունը բնաւ պիտի չի մոռցուի մեր բոլոր Հայու ազգին մէջ »:

Յարգելի ուսուցչապետն իրեն մեծ պարգև համարելով այս նամակը՝, սիրով կը նստիւնք զայն իրեն և կը դառնանք վերջ տալու իւր համառօտ կենսագրութեան:

Սա ոչ միայն վնասակար կանառին ամենէն արդիւնատու անդամն է՝ այլ և ոգին է: Զարգացած հասակին մէջ, տակաւին ժիւ եռանդով կ'աշխատի՝ նոյն կանառը միշտ փայլուն ցուցնելու, թէ օտար և թէ բնիկ կանառներու և ակադէմիաներու առջև: Կանառակից է ուրիշ շատ դիտական ընկերութեանց. ինչպէս, Հոովմայ ինչ հին և անուանի Լիչի (Licci) ակադէմիային. — Գործօն (Effettivo) ընկերակից Պատահունի արքունի ակադէմիային. — Թղթակց.

ընկեր Կրուսակայի (Crusca) ակադէմիայի. Հռոմայ աշխարհագրական ընկերութեան, Վենետիկան Աթենէոյին, Փալերմոյի արք. ակադէմիայի, Փէլիի արք. ակադէմիայի, Մատրիսի Պատմական ակադէմիայի, Ֆինլանտիոյ Գրականական ընկերութեան, Հէլսինկֆորսի Ֆիննո-Ուկրիզա ընկերութեան, Հոլանտական Հնդկատանի Թագաւորական կանառին, Իտալիոյ և Գերմանիոյ Արեւելեան Ընկերութեանց, Պառնասի և Հռոմայ Ազգային Պատմութեան ընկերութեանց, և Պատասխանի արք. Համալսարանի մէջ ուսուցչապետ և դասական լեզուաց սանսկրիտի և համեմատական քերականութեան. նոյնպէս Թղթակից անդամ Բազմ. Խրմ. Բազմութեան:

Թէպէտ այս մեծ լեզուագէտը չունի ստուարահատոր մեծածաւալ հեղինակութիւնք, այլ փոքրիկ տետրակներու մէջ ամբօքած քննադատութիւնք, սակայն արդի իտալական դրականութեան անգին զոհարներ են, որոնք բացարձակութիւնք իմաստաւորցը են, գրութեան ոճն համակրելի և ծաղիկեալ:

Հ. Ս. ԵՐԵՄ.



Խորին տխրութեամբ համակեալ՝ հարկ կը համարինք ծանուցանել մեր ընծերցողաց, Թէ ներկայ ամսամերթիս մէջ չենք կարող կատարել մեր նուիրական՝ բայց տխուր պարտականութիւնը՝ հրատարակելու հանգուցեալ Վստմ. ՄԻՔԱՅԷԼ ՓԱՇԱ ՓՈՐՔՈՒԳԱԼԻ կենսագրական համառօտ տեղեկութիւնք, հանդերձ կենդանագրով նորին Վստմութեան, զոր 1898 ի Յամաարի Թերթին կը թողունք, արդէն իսկ Գեկտեմ բերի Թերթը շարուած եւ տպուած լինելով: — Սոյն առթիւ կը փութանք յայտնել մեր անկեղծ ցաւակցական զգացումները իւր ազնուագարմ սգաւոր ընտանեաց:

* « E, a conforto dei linguaioli aggiungo che c'è nel *Basmavep* anche una lettera nella parlata volgare del paese, con opportune notizie da rischiararla. Per noi stranieri una traduzione alla lettera nell'armeno moderno sarebbe stata più caro dono ». Atti del R. Istituto Veneto. pag. 1224. — 1897.